ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ ՍԼԱՎՈՆԱՖԻԼՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏ

Լ. Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

XIX դ. հայ նշանավոր հրապարակախոս Գրիգոր Արծրունու և նրա հրատարակած «Մշակ» թերթի աչքի ընկնող ծառայություններից մեկը ռուս առաջադիմական մտքի և գրականության պրոպագանդան է հայ իրականության մեջ։ Չափազանց գնահատելի են ռուսական կողմնորոշման քաղաքական հեռահար նկատառումից սնվող և երկու ժողովուրդների միջև հոգևոր կամրջի ամրապնդմանն ուղղված «Մշակի» խմբագրի ջանքերը, երբ ռուսական հասարակական մտքի նվաճումներին վերապահվում է այն նշանաձողերի դերը, որոնք ճանապարհ էին ուղենշելու նաև հայ ժողովրդին՝ իր ազգային զարթոնքի պատմական փուլում։ Այդ նշանաձողերը խորհրդանշված ենք տեսնում Գոգոլի, Պուշկինի, Լերմոնտովի, Տուրգենևի, Գարշինի, Օստրովսկու, Նեկրասովի, Գոնչարովի, Սալտիկով-Շչեդրինի, Ուսպենսկու և այլ ռուս գրողների անուններով, իսկ հրապարակախոսական մտքի կորիֆեյների դերում տեսնում ենք Պիսարևին, Բելինսկուն, Դոբրոլյուբովին, Շելգունովին և այլ նշանավոր գործիչների[1]։ Հարկ է նշել, որ, լինելով եվրոպական քաղաքակրթության ջատագով, Արծրունին հանդես է գալիս որպես ռուս հասարակական մտքի այն ուղղության պաշտպան, որը հայտնի է արևմտական անունով, որին և նա վերագրում է ռուսական կյանքի առաջադիմական բոլոր դրսևորումները։

Սակայն ռուս հասարակական մտքի նկատմամբ Արծրունու հետաքրքրությունները չեն սահմանափակվում միայն նրա ամենաառաջադեմ ներկայացուցիչների դրվատումով։ Բանն այն է, որ թերթի էջերում Արծրունին բավական մեծ տեղ է հատկացրել սլավոնաֆիլության քննադատությանը։ Դա գալիս է ոչ միայն և ոչ այնքան ռուս հասարակական մտքի, գաղափարական տարբեր ուղղությունների նկատմամբ հետաքրքրությունից, որքան սլավոնաֆիլության և հայ պահպանողականության անալոգիայի միջոցով վերջինիս պատմական դատապարտվածությունը հաստատելու և իր գաղափարական հակառակորդներին ջախջախելու Արծրունու համար առաջադիր խնդրի իրականացման ցանկությունից։ Նշենք, որ պատմական զուգահեռները տարբեր ժողովուրդների հասարակական զարգացման համանման փուլերում օգնում են հաղթահարելու, բացելու հասարակական մտքի պատմության բարդ, վիճելի, եթե կարելի է ասել, «քարկապ ընկած» հանգույցները՝ դրանց մոտենալով ընդհանուր օրինաչափությունների և ազգային առանձնահատկությունների դիալեկտիկական միասնության բանալիով։

Դիտելի է մի օրինաչափություն. հասարակական մտքի հոսանքները ձևավորվում են կապիտալիզմի զարգացման շեմին, երբ տվյալ ժողովրդի պատմական զարգացման հեռանկարի հարցը մղվում է օրակարգի առաջին կետը։ Այդպիսի իրադրություն էր Ռուսաստանում XIX դ. կեսերին, երբ ճորտատիրական կարգերի ճգնաժամը առաջադրել էր որոշակի պատասխան պահանջող հարց՝ ի՞նչ ճանապարհով է զարգանալու Ռուսաստանը։ Այս հարցին տրված տարբեր պատասխաններն էլ ռուս մտավորականներին խմբավորեցին գաղափարական երեք հոսանքների շուրջը՝ արևմտականներ, սլավոնաֆիլներ և հեղափոխական-դեմոկրատներ։ Այս անվանումների մեջ խտացված է նրանց դավանած ուղղությունը։ Արևմտականները մատնացույց էին անում

---

[1] Մանրամասն տե՛ս Լ. Գևորգյան, Ռուս առաջադիմական գրականության և հրապարակախոսության պրոպագանդան Գրիգոր Արծրունու «Մշակում» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններից», 1986, №11, էջ 25)։

արևմտաեվրոպական կապիտալիզմի ուղին, սլավոնաֆիլները ռուս ազգի գլխավորությամբ սլավոնական ժողովուրդների համար զարգացման ուրույն ճանապարհ էին որոնում, իսկ հեղափոխական-դեմոկրատները գյուղացիական մասսաների դեմոկրատական հեղափոխության մեջ էին տեսնում Ռուսաստանի ազատագրության միակ ուղին։

Սլավոնաֆիլները գերազանցապես սերում էին բուրժուականացող ազնվականական ընտանիքներից, որը և իր կնիքն էր դնում նրանց բարդ, հակասություններով լի, էկլեկտիկ հայացքների վրա, պայմանավորելով դրանց լիբերալ-կալվածատիրական քաղաքական ուղղվածությունը։ Նրանք փորձում էին հիմնավորել Ռուսաստանի պատմական զարգացման ինքնատիպ ուղու հնարավորությունը տարբեր արևմտաեվրոպական երկրների քաղաքական, սոցիալական և կուլտուրական զարգացումից։ Այդ ինքնատիպությունը նրանք պայմանավորում էին Ռուսաստանում համայնքների և ուղղափառ եկեղեցու գոյությամբ, որոնք որպես ազգի միության հենարաններ իբր բացառում էին դասակարգային հակասությունները։ Նրանք գտնում էին, որ ռուս հասարակական միտքը բավականաչափ հասունացել է ինքնուրույն զարգանալու համար, որ արևմտյան մշակույթով հիանալու ժամանակն անցել է և վրա է հասել այն քննադատելու շրջանը։ Այս հարցադրումներով սլավոնաֆիլները հակադրվում էին լիբերալների կոսմոպոլիտիզմին, գտնելով, որ ռուս ժողովուրդը համամարդկայինի նկատմամբ ունի ուղղակի իրավունք և Եվրոպայի միջնորդության կարիքը չունի։

Ռուսաստանում XIX դ. հասարակական-քաղաքական պայքարի գլխավոր հարցի՝ ճորտատիրական իրավունքի վերացմանը սլավոնաֆիլները կողմնակից էին «վերևից», ցարական ռեֆորմների միջոցով։ «Ինքնատիպ» ուղու որոնումը, սակայն, ի վերջո բերելու էր կապիտալիզմի զարգացման պրուսական եղանակի ընդունման անխուսափելիությանը, քանի որ նրանց տնտեսական-քաղաքական ծրագրի պրակտիկ իրագործումը հանգեցնելու էր կապիտալիզմի զարգացմանը և՛ գյուղատնտեսության, և՛ արդյունաբերության մեջ։ Հենց այստեղ լուծվում են սլավոնաֆիլների և արևմտականների տարաձայնությունները, և երևան են գալիս շփման կետերը։ Ինչպես տնտեսության բնագավառում՝ առևտրի և արդյունաբերության զարգացման, երկաթուղիների կառուցման, գյուղատնտեսական մեքենաների գործադրման, վարձու աշխատանքի կիրառման, այնպես և մշակույթի բնագավառում՝ ազգային գրականության և արվեստի զարգացման, դրանց ժողովրդայնացման, ժողովրդական ստեղծագործության նկատմամբ ուշադրության պահանջները ազգի բուրժուական վերածնության առաջադրություններ են, որոնք պրոպագանդում էին և՛ արևմտական, և՛ սլավոնաֆիլ հրապարակախոսները։

Սլավոնաֆիլներին բնութագրող գծերից մեկն էլ նրանց իդեալիստական հայացքներն են պատմության նկատմամբ։ Իդեալականացնելով նահապետական կարգերը, մինչպետրոսյան Ռուսիան, նրանք պատմական անցյալը պատկերացնում էին իբրև ներդաշնակ, հակամարտությունից և դասակարգային պայքարից զերծ երանելի մի թագավորություն, որը խախտվեց Պետրոս Մեծի ձեռքով՝ Ռուսաստանի պատուհանները դեպի Եվրոպա բացելուց հետո։ Այնտեղից ներխուժած հոսանքները աղճատեցին ռուսական կյանքը՝ այն հանելով բնականոն զարգացման հունից և պարտադրելով օտարոտի ապրելակերպ ու բարքեր։ Խախտվեց ցարի և ժողովրդի ներդաշնակ միասնությունը։ Սլավոնաֆիլները առանձնապես դժգոհ էին Նիկոլայևյան ռեժիմից, քննադատում էին ցարական բյուրոկրատական կարգերը, գրաքննական օրենքները, ճորտատիրական անարդար դատարանը։ Լիբերալ օպոզիցիայի սահմաններում պահանջում էին հասարակական կարծիքի և խոսքի ազատություն, գրաքննական ճնշման վերացում, դատարանի հրապարակայնություն և ներկայացուցչականություն, մահապատիժների և մարմնական պատիժների վերացում և այլն։

Սլավոնաֆիլությունը լայն զարգացում և տարածում չգտավ։ Սկիզբ առնելով անցյալ դարի 30—40-ական թվականներին, այն բուռն վերելք ապրեց

ռեֆորմի նախօրյակին, իսկ ապա ճորտատիրական Ռուսաստանի անկման հետ մարեց, հաստատելով իր ավելորդությունը Եվրոպայի օրինակով Ռուսաստանում զարգացող կապիտալիզմի պայմաններում։

Անհրաժեշտ ենք գտնում անդրադառնալ նաև ռուսական պատմագրության մեջ սլավոնաֆիլության՝ իբրև հասարակական մտքի հոսանքի գնահատության հարցին, քանի որ զարմանալի օրինաչափությամբ, այդ վիճահարույց պրոբլեմի պատմագրությունը նույնպես «զուգահեռների» նյութ է տալիս։

Սովետական ռուս պատմաբանների մեջ արժանին հատուցելով վաստակաշատ գիտնական Ս. Ս. Դմիտրիևի ծառայությանը, պետք է ասել, որ նրան է պատկանում պրոբլեմի գիտական ուսումնասիրման մեթոդաբանության, ելակետային կողմնորոշումների մշակման առաջնությունը։ Ինչի՞ն էին ուղղված գիտնականի ջանքերը. «Լուսաբանել սլավոնաֆիլությունը նորովի, ցույց տալ ռուս հասարակական մտքի ուղղության ինքնատիպությունը, նրա տարբերությունը «պաշտոնական ժողովրդայնության» ռեակցիոն թեորիայից և բացահայտել ոչ միայն ամբողջության մեջ այդ գաղափարախոսության պահպանողական բնույթը, այլև ընդգծել դրա հարաբերական առաջադիմական կողմերը»[2]։ Սլավոնաֆիլությունը նահապետական, ճորտատիրական կարգերը պաշտպանող ռեակցիոն ֆեոդալական հոսանք չէ, այլ ճորտատիրության վերացմամբ շահագրգռված բուրժուակալվածատիրական գաղափարախոսություն, որն ունի նոր հասարակարգի զարգացմանն ընդառաջող առաջադիմական որոշ միտումներ, պահպանողական ընդհանուր մտահայեցությամբ հանդերձ։ Ս. Դմիտրիևը պատմաբանների ուշադրությունն է հրավիրում հենց այդ անուրանալի կողմերի ուսումնասիրման անհրաժեշտության վրա։

Սակայն վերահաս Հայրենական պատերազմը հետաձգեց այդ հարցերի ուսումնասիրությունը։ Ավելին, մոռացվեցին նվաճված դիրքերը, և հետպատերազմյան պատմագրության մեջ նորից ծլարձակեց սլավոնաֆիլության՝ իբրև հասարակական մտքի հոսանքի ուղղության, միայն ռեակցիոն կողմերով գնահատելու մերժելի ելակետը։ Սակայն ժամանակը հասունացրել էր պատմական արժեքները վերագնահատելու և այդ բնագավառում սովետական պատմագրության նվաճումներն ընդհանրացնելու անհրաժեշտությունը։ Դրան ձեռնամուխ եղավ ՍՍՀՄ պատմության ինստիտուտի ավագ գիտական աշխատող Ե. Ա. Դուձինսկայան, մենագրական հետազոտության նյութ դարձնելով սլավոնաֆիլական գաղափարախոսության ամբողջ համակարգը[3]։ Նա ցույց է տալիս այդ հոսանքի նկատմամբ եղած միակողմանի մոտեցումը, կոնյունկտուրային, գռեհիկ սոցիոլոգիզմին և սխեմատիզմին տուրք տալը, որը, որպես կանոն, միշտ էլ հանգեցնում է սխալ եզրահանգումների։ Հեղինակը առաջին պլան է մղում սլավոնաֆիլության այն առաջադրույթների բուրժուական բովանդակությունը, որոնք ազատում են հոսանքը տրադիցիայի ուժ ստացած լոկ ռեակցիոն պիտակավորումից, բնավ չխուսափելով հոսանքի այն հետամնաց կողմերի քննադատությունից, որոնք արդյունք էին սլավոնաֆիլների աշխարհայացքի սոցիալ-դասակարգային սահմանափակության։ Պատմաբանը գալիս է այն գիտական եզրահանգման, որ սլավոնաֆիլությունը, լինելով ճորտատիրական սիստեմի ճգնաժամի ծնունդ, իրենից ներկայացնում էր բուրժուակալվածատիրական լիբերալիզմի մի տարատեսակ, նրան հատուկ գծերով՝ տնտեսության բնագավառում կապիտալիստական վերափոխությունների ձգտումով, սոցիալական և քաղաքական կյանքում բուրժուական ռեֆորմների պահանջով՝ ինքնակալության պահպանմամբ, խիստ թշնամությամբ դեպի ամեն հեղափոխականը։ Օբյեկտիվորեն գործելով երկրի բուրժուական զարգացման օգտին, սլավոնաֆիլները ձգտում էին ֆեոդալական միապետությունը վերածել բուրժուական միապետության։ Հեղինակը արդա-

---

2 Историк-марксист, 1941, № 1, с. 97.

3 Տե՛ս Е. А. Дудзинская, Славянофилы в общественной борьбе, М., 1983.

բացի է գտնում, որ սովետական պատմագիտությունը հրաժարվեց երկու գաղափարական հոսանքների՝ արևմտականության և սլավոնաֆիլության, խիստ հակադրումից, դրանք դիտելով մեկ լիբերալ լագերի ճյուղավորումներ։ Ընդսմին, սլավոնաֆիլության մեջ իբրև բուրժուական լիբերալիզմի յուրատեսակ դրսևորում, կարելի է գտնել այնպիսի գծեր, որոնք հատուկ են այլ ժողովուրդների բուրժուական գաղափարախոսներին համանման պատմական իրադրության մեջ։ Այսպիսով, սլավոնաֆիլությունը միայն ռուսական երևույթ գիտելու կոնցեպցիան նույնպես մերժվում է՝ գուռ բանալով պատմական անալոգիաների համար։

Ցույց տալով սլավոնաֆիլների փիլիսոփայական և պատմական հայացքների իդեալիզմն ու սահմանափակությունը և դրանց կողքին՝ նրանց գործունեության դրական կողմերը, Դուձինսկայան հենվում է ժամանակի հասարակական մտքի առաջատարների՝ հեղափոխական-դեմոկրատների կարծիքներին, որոնք գաղափարական պայքարի մեջ սկզբունքայնության և անաչառության օրինակ տալով, ոչ միայն քննադատում էին սլավոնաֆիլներին, այլև արևմտականներին, և նշում նրանց ծառայությունը հասարակական զարգացման որոշակի հարցերում։

Սլավոնաֆիլների մտահայեցության պատմական շարժառիթները բացահայտելուց հետո հեղինակը իրավամբ եզրակացնում է. «Նրանք բնավ չժխտելով Արևմուտքի հետ փոխհարաբերության օգուտը, ցանկանում էին Ռուսաստանին դնել նրա հետ հավասար դիրքում, ազատվել հոգևոր ստրկությունից, ստեղծել ազգային գիտություն, գրականություն և արվեստ և դրանով մտցնել իր բաժինը համաշխարհային մշակույթի մեջ»[4]։

Կարծում ենք անցյալի ռուս հասարակական մտքի պատմության ուսումնասիրման փորձը օգնում է նաև լուծելու նույն շրջանի հայ հասարակական մտքի կնճռոտ, վիճելի հարցերը, նորովի մոտենալով դրանց։ Պատմական արժեքների վերագնահատումը պատմագիտության սեպուհ պարտքն է, նրա համարձակության, անաչառության ապացույցը։ Շատ անգամ ավելի դժվար է հաղթահարել քարացած, ավանդույթի ուժ ստացած սխալ տեսակետները, քան հարթել, մշակել պատմության խոպան դաշտերը։

Ազգային-պահպանողականությունը իբրև հոսանք հայ իրականության մեջ երկար կյանք չունեցավ[5]. այն ձևավորվեց անցյալ դարի կեսերին և իր գոյությունը պահպանեց մոտ կես դար։ Նոր տնտեսակարգի՝ կապիտալիզմի զարգացումը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում օրակարգի հարց դարձրեց երկրի պատմական զարգացման հեռանկարի խնդիրը, որը հայ մտավորականությանը խմբավորեց տարբեր հոսանքների մեջ՝ ըստ այս հարցին տված պատասխանների։ Գաղափարական պայքարը թեժացավ հատկապես 70—80-ական թվականներին, երբ Գրիգոր Արծրունին «Մշակ» թերթի լույս ընծայումով (1872 թ.), սրեց ու բևեռացրեց գաղափարական կռիվը։ Բուրժուական առաջադիմության գաղափարախոս Գ. Արծրունին և նրա թերթը հայ ժողովրդի զարգացման ուղին գծում էին, հենվելով եվրոպական ժողովուրդների պատմական զարգացման օրինակին, իրենց գաղափարական հակառակորդներին, որոնք ներկայացնում էին «Մեղու Հայաստանի», «Փորձ» «Արձագանք», «Նոր-դար» պարբերականները, անվանելով «պահպանողականներ»։ Այդ անունը հոլովվելով, սովորության ուժ ստացավ ու մտավ գրականության մեջ։ Բառերը դառնալով պատմական տերմիններ, հաճախ ստանում են նոր բովանդակություն, տարբեր իրենց բառարանային իմաստից։ Կարծում ենք սխալ է այսօր «պահպանողական» բառից կառչելով սևացնել հոսանքի գաղափարախոսներին։ Նրանք ոչ թե պահպանողական էին հնի պահպանման իմաստով, այսինքն՝ հնամոլ, զարգացման թշնամի, այլ ազգային

---

4 Նույն տեղում, էջ 45։

5 Այս մասին տե՛ս մանրամասն Մ. Հ. Մ խ ի թ ա ր յ ա ն, XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Երևան, 1976։

լավագույն ավանդույթների, պատմության քննությունը բռնած ազգային ինստիտուտների պահպանման կողմնակիցներ, որոնք հենց դրանց վրա հենվելով էլ ուզում էին գծել ազգի հետագա զարգացման ուղին։ Նրանք ավելի հարմար անուն էին ընտրել իրենց՝ **ավանդապահներ**։

Ոչ միայն չմերժելով համաշխարհային քաղաքակրթության նվաճումները հայկական կյանքին պատվաստելու հնարավորությունը, այլև ընդառաջ գնալով դրան, նրանք նախանձախնդիր էին համաշխարհային մշակույթի գանձարանը ներմուծել նաև հայ ժողովրդի ձեռքբերումները, ուստի շատ մեծ տեղ էին տալիս հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հարցերին, մտահոգվում ոչ միայն Եվրոպային ծանոթանալու, այլև հայ ժողովրդին եվրոպացիներին ծանոթացնելու խնդրով։ Ակնհայտ է հասարակական-գաղափարական կյանքի նույն օրինաչափությունը, ինչ որ Ռուսաստանում, միայն ուշացումով։

Հայ լիբերալները ռուս արևմտականների նման հենվում էին Եվրոպայի դասական կենսափորձին, իսկ հայ ազգային-պահպանողականները, ինչպես ռուս սլավոնաֆիլները՝ ազգային սկիզբներին։ Ո՛չ սլավոնաֆիլները և ո՛չ էլ հայ ազգային-պահպանողականները նիհիլիստորեն չէին տրամադրված արևմտյան քաղաքակրթության նկատմամբ, այլ՝ քննադատորեն, գտնելով, որ այդ քաղաքակրթության լավագույն սխեմաները պետք է յուրացվեն առանց խաթարելու, սակայն, տվյալ ժողովրդի ազգային ինքնատիպությունը։ Հայ ազգային-պահպանողականները չէին հասնում ինքնատիպ, միայն հայ ժողովրդին հատուկ զարգացման ճանապարհ որոնելուն, դրա համար չունենալով ռուսական համայնքի նման անգամ խաբուսիկ հենարան, սակայն ձգտում էին կապիտալիզմի ուղիով անխուսափելի զարգացման մեջ առավելագույնս պահպանել ազգային հիմունքները։

Ե՛վ արևմտականները, և՛ սլավոնաֆիլները իրենց սոցիալական պատկանելությամբ գերազանցապես ազնվականներ էին, թեև նրանց շարքերում կային նաև ռազնոչին մտավորականներ։ Այս հանգամանքն իր կնիքն էր դնում նրանց գաղափարախոսության վրա, որտեղ կալվածատիրական-բուրժուական դասակարգի շահերը միշտ առաջին պլան էին մղվում։ Այդ շահերն էին արտահայտում դարակեսի հասարակական-քաղաքական պայքարով հասունացած և սլավոնաֆիլների ակտիվ մասնակցությամբ իրագործված բուրժուական ռեֆորմները։ Հայ լիբերալ ու ազգային-պահպանողական հոսանքների գործիչների մեջ մեծ թիվ էին կազմում տարաստիճան մտավորականները (իրավաբաններ, բժիշկներ, մանկավարժներ և այլն), մի հանգամանք, որը չէր կարող իր կնիքը չդնել հոսանքների գաղափարական ուղղության վրա, դրանց հաղորդելով որոշակի դեմոկրատական երանգ։

Այս հարցադրումը հղի է մի վտանգով. քանի որ ազատամիտներն ու պահպանողականները նույն բուրժուական լիբերալիզմի տարատեսակությունն են, ապա ինչու նրանց չմիավորել մի հոսանքի մեջ, մանավանդ որ «պահպանողական» հորջորջումն էլ լիովին չի համապատասխանում այդ գործիչների հայացքներին ու գործունեությանը, որոնք հայ ժողովրդի առաջադիմությամբ ոչ պակաս էին շահագրգռված, քան ազատամիտները։ Սա կնշանակեր կասկածի տակ առնել անցյալ դարի հայ իրականության մեջ ազգային-պահպանողական հոսանքի գոյությունը, հոսանք, որն իր շարքերում մեծ թվով մտավորականներ էր միավորում։ Այսպիսի եզրահանգումը կլիներ մեղանչում պատմական ճշմարտության առջև։ Մի՞թե իրավացի կլիներին ռուս պատմաբանները, եթե արևմտականությունը և սլավոնաֆիլությունը նույն բուրժուական լիբերալիզմի տարատեսակություններ դիտելով, դրանց դնեին մի հոսանքի մեջ, անգիտանալով կես դար տևած այն հախուռն վիճաբանությունները, որոնք այնքան մարդկային կրքեր խլեցին, լցնելով մամուլի էջերը։ Այսօր չի կարելի անգիտանալ ոչ նրանց տարաձայնությունները, որոնք ինքնուրույն հոսանքի, հասարակական մտքի ուղղության իրավունք են տալիս յուրաքանչյուր կողմին, ոչ էլ ընդհանրությունները, որոնք նրանց դարձնում են նույն բուրժուական գաղափարախոսության ճյուղավորումներ։

Պատմության դաժան սրով երկու հատվածի կիսված հայ ժողովուրդը ճնշվում էր մի կողմից ցարական ինքնակալության և մյուս կողմից թուրքական սուլթանիզմի լծի տակ։ Ճնշված փոքր ազգի նացիոնալիզմի դեմոկրատական բովանդակությունը աներկբայելի է. այս հանգամանքը ևս հայ ազգային-պահպանողականության գաղափարախոսությանը հաղորդում է դեմոկրատական ուղղվածություն։ Սլավոնաֆիլների նման նրանք ևս դժգոհ էին ցարական տիրող կարգերից, սակայն նրանց դժգոհությունը արդյունք էր ոչ միայն այն ընդհանուր ճնշման և բռնությունների, որոնց ենթարկվում էին ռուսական կայսրության մեջ ապրող բոլոր ժողովուրդները, և առաջինը՝ ռուս ժողովուրդը, այլև ցարիզմի հայահալած քաղաքականության, որ իրականացվում էր ռուս-թուրքական պատերազմից հետո, հայկական ազգային դպրոցները փակելու, գրաքննական մամլիչով տեղական մամուլը ճնշելու, ընդհուպ մինչև պարբերական հրատարակությունները խափանելու միջոցով։ Ցարական գրաքննական ճնշումներին ամենից շատ ենթարկվում էին ազգային-պահպանողական հրատարակությունները. «Արձագանք» թերթի դադարեցումը (1898 թ.) դրա արտահայտությունն էր։

XIX դ. վերջին տասնամյակներին հայ հասարակական մտքի զարգացմանը որոշակի առանձնահատկություն է հաղորդում Հայկական հարցի երևան դալը. եթե արևելահայության ճակատագիրը մեկընդմիշտ լուծվել էր Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալու պատմական ակտով, ապա արևմտահայությունը մնում է ոչ միայն անողոք կեղեքման, հալածանքի ու ճնշման վիճակում, այլև ֆիզիկական ոչնչացման վտանգի մեջ։ Արևմտահայության ճակատագրի հարցը զբաղեցնում է հայ մամուլի բոլոր ուղղությունների պարբերականներին։ Որքան էլ տարբեր լինեին հայ ժողովրդի պատմական զարգացման նրանց առաջադրած ծրագրերը, Հայկական հարցը մտերմացնում էր հոսանքները։ XIX դ. հայ հասարակական հոսանքների առանձնահատկություններից մեկն էլ դրանց թույլ սահմանազատվածությունն է, հակառակ ռուս հասարակական հոսանքների ցայտուն արտահայտվածության։

Ազգային պահպանողականները եկեղեցու դերի ֆետիշացմամբ, նրա միջոցով ազգի միասնությունը, ազգային դիմագիծն անխաթար պահելու ձգտումներով ընդհանուր եզրեր ունեն սլավոնաֆիլների հետ։ Սակայն եթե ռուսական ուղղափառ եկեղեցին, հանձին ցարիզմի, պետական հզոր հովանի ուներ, ապա պետականությունից զուրկ հայ ժողովրդի ազգային գաղափարախոսները հայ լուսավորչական եկեղեցին դիտում էին նաև որպես քաղաքական իշխանության մարմին, և հենց այդ պատճառով էլ նախանձախնդիր էին նրա հեղինակության պահպանմանը և անհանդուրժող էին աղանդների նկատմամբ, որոնք ջլատում էին եկեղեցին ու ազգը։ Արծրունու դիրքորոշումը եկեղեցու բարեփոխության առաջարկներով շնչում էր առաջադիմությամբ, և երիցս անարդար էին նրան ազգի և եկեղեցու թշնամի համարողները։

Մշակույթի, գրականության և արվեստի զարգացմանը երկու հոսանքների գործիչների և պարբերական հրատարակությունների բերած նպաստը նժարի վրա հավասար կշռաքարեր է վերցնում։ XIXդ. հայ դասական գրականության երկերը ծնվել են հայ մամուլի էջերում և՛ լիբերալ, և՛ ազգային-պահպանողական, արգասավորելով մեր ժողովրդի միասնական զարթոնքը։ Ազգը լուսավորելու, նրան ինքնաճանաչության հասցնելու ջանքերը, այսպիսով, միավորում են հայ ազատամիտներին և ազգային-պահպանողականներին իբրև բուրժուական վերածնության գործիչների։ Ճիշտ այդպես անտարակուսելի է ազգային մշակույթի զարգացման գործում սլավոնաֆիլների ծառայությունը, որը թերագնահատում էին արևմտականները։

Հայ ազգային-պահպանողականների դեմ հիմնականում կանգնած էին մշակականները, իսկ սլավոնաֆիլների դեմ՝ և՛ արևմտականները, և՛ հեղափոխական-դեմոկրատները, ընդսմին պայքարի ծանր հրետանին հեղափոխական-դեմոկրատների ձեռքում էր։ 40-ական թվականներին Բելինսկին և Գերցենը արևմտականների օրգան «Отечественные записки» ամսագրի էջերում,

իսկ ապա նրանց հեղափոխական տրադիցիաները ժառանգած Չերնիշևսկին ու Դոբրոլյուբովը 50—60-ական թվականներին «Современник»-ի էջերում քննադատեցին սլավոնաֆիլների ժամանակավրեպ, իդեալիստական հայացքները, նրանց ժողովրդասիրությանը հակադրելով աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանության իսկական օրինակ։ Սակայն քննադատելով նրանց հայացքների սահմանափակությունը, ռուսական մտքի առաջատարները գնահատում էին սլավոնաֆիլության որոշ, ժամանակի առումով դրական գաղափարները, ինչպես օրինակ, համայնքի պահպանման, ազգային մշակույթի և գիտության զարգացման, լուսավորության տարածման, հասարակական կյանքի ակտիվացման, խոսքի ազատության և այլնի վերաբերյալ։

Հայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքը, որն իր զարգացման գագաթնակետին հասավ անցյալ դարի կեսերին ռուս հեղափոխական-դեմոկրատների զինակից Միքայել Նալբանդյանի գործունեության և հրապարակախոսության շնորհիվ, դաղափարապես ջախջախելով կղերաֆեոդալական հոսանքը, 70-ական թվականներին չուներ իր ամբիոնը և իր գոյությունն զգացնել էր տալիս հենց նույն ազգային-պահպանողական և լիբերալ մամուլում, դրանց հաղորդելով դեմոկրատական լիցքեր։

Անդրադառնանք Արծրունու՝ իբրև բուրժուական առաջադիմության գաղափարախոսի, մեթոդաբանությանը. ազատամիտներ և պահպանողականներ, առաջադիմականներ և հետադիմականներ — այս հակադրությունը Արծրունու համար նոր շրջանի պատմության բանալին է։ Այս սխեմատիկ մեթոդաբանությունը խանգարում է նրան տեսնել առաջադիմության լայնահուն գետի մեջ թափվող բոլոր վտակները։ Ազատամտության շրջանակից դուրս ամեն ինչ նրա համար կամ հետադրժություն է, կամ «սոսկալի» հեղափոխականություն։ Նա չափից ավելի է պարզեցնում պատմական զարգացման պրոցեսը, հասարակական մտքի բազմագույն մտայնությունների բարդ հյուսվածքում միայն երկու գույն տեսնելով՝ սև և սպիտակ։ Իր արտաքին տեսություններում և առաջնորդող հոդվածներում նա հաճախ է քննության առնում եվրոպական քաղաքական կյանքը։ Նա այդ անում է ոչ միայն Եվրոպայի քաղաքական անցուդարձը իր ընթերցողներին ներկայացնելու, այլև եվրոպական քաղաքակրթության կենսաձևերը իբրև օրինակ մատնացույց անելու նպատակով։ Նա ուներ նաև ածանցյալ նպատակ. հայ պահպանողականության դեմ մղած իր պայքարում լրացուցիչ զենքեր հայթայթել, եվրոպական քաղաքական կյանքի դասերով դաղափարապես հաղթել իր հակառակորդներին։

Արծրունուն անմատչելի են հոսանքների իմացաբանական-ծագումնաբանական արմատները, նա անգիտանում է նաև տեղական, ազգային առանձնահատկությունները։ Նրա համար պահպանողականությունը մի աղվեսադրոշմ էր, որով կարելի էր խարանել և՛ անգլիական պահպանողականության պարագլուխ Բիկոնսֆիլդի, և՛ իր գաղափարական հակառակորդ, «Մեղու Հայաստանի» թերթի խմբագիր Պ. Սիմեոնյանի ճակատը, իսկ ազատամտությունը լուսապսակ է գծում և՛ «հանճարեղ» Գլադստոնի, և՛ հայ ազատամիտների գլխավերևում։ Բնութագրելով տորիների և վիգերի պայքարը, նա ուղղակի քար էր նետում հայ ազգային-պահպանողականների բանջարանոցը, իր տեսությունները համարյա միշտ վերջացնելով պատմության կողմից առաջինների դատապարտվածության և երկրորդների անվերապահ հաղթանակի հավատով։

Արծրունին Եվրոպայի սոցիալ-քաղաքական դասերով փորձում էր հասարակական կողմնորոշումներ տալ հայ ընթերցողներին, հավաքագրելով նրանց ազատամիտ ուղղությանը համակրողների շարքերում։ Սակայն հայ ժողովրդին ամենից ավելի մատչելի, տեսանելի կարող էին լինել ռուսական հասարակական կյանքի դասերը։ Մի պետության սիստեմում երկու ժողովուրդների հասարակական զարգացման աստիճանների միջև տարբերությունն այնքան մեծ չէր, ինչպես, ասենք, Եվրոպայի և Ռուսաստանի միջև։ Հենց այս պատճառով էլ «Մշակի» գաղափարական բարոմետրը չափազանց զգայուն էր ռուս հասարակական մտքի տատանումների նկատմամբ։ Արծրունին դրան-

ցում էր փնտրում այն հարցերի պատասխանները, որոնք հասունացնում էր հայ իրականությունը։

«Մշակի» 1880 թ. № 198-ի առաջնորդող հոդվածը, որ կրում է «Քաղաքական միստիցիզմ» վերնագիրը, կարելի է գնահատել որպես իսկական արևմտականի ելույթ ընդդեմ սլավոնաֆիլության։ «Անհերքելի իրողություն է,— գրում է Արծրունին,— որ այժմ ռուսաց գրականությունը և մամուլի մի մասը սկսում են ենթարկվել միստիցիզմի վարդապետությանը, շնորհիվ երկու նշանավոր անձնավորությունների, այն է՝ Ակսակովի և Դոստոևսկու։ Այդ երկու հեղինակների վարդապետության հիմնական միտքն այն է, որ Պետրոս Մեծի վերանորոգությունները վնասել են Ռուսաստանին, որ եվրոպական ժամանակակից գիտությունը ամեն տեսակ անբարոյականության աղբյուրն է, որ Եվրոպան հնացել է, փտել է, որ Ռուսաստանը պետք է վերանորոգի Եվրոպային, բայց ոչ թե նրանից ստացած գիտությունը իր մեջ առաջացնելով, ոչ, այլ վերադառնալով սկզբնական նահապետական ազգային կյանքին։ Բայց ինչի՞ մեջ են տեսնում նրանք այդ նահապետական ազգային կյանքը. այն բանի մեջ, որ ամենքս անվանում ենք ժողովրդի տգիտություն, նախապաշարմունք, սնոտիապաշտություն...»։ Դժվար չէ նկատել, որ Արծրունին Ակսակովի և Դոստոևսկու հայացքների մասին դատում է ոչ թե նրանց գրչի անմիջական արտադրանքը աչքի առջև ունենալով, այլ նրանց գաղափարական հակառակորդների «մեկնաբանությունը», ուր ամեն ինչ գռեհկացված էր և ջախջախելը այնպես հեշտ։ Ազատագրելով սլավոնաֆիլներին լիբերալների հանիրավի մեղադրանքներից, սովետական ռուս պատմաբանը հենվում է Ն. Չերնիշևսկու օբյեկտիվ կարծիքին, որը սլավոնաֆիլներին նախ անջատում է «պաշտոնական ժողովրդայնության» ռեակցիոն տեսության պաշտպաններից՝ «Москвитянин» ամսագրի ղեկավարներ Մ. Պոգոդինից և Ս. Շևիրյովից, և ապա զրպարտություն համարում նրանց Արևմուտքի նկատմամբ թշնամական վերաբերմունք վերագրելը, գտնելով որ Եվրոպայում գոյություն ունեցող ամեն մեծ ու լավ բանի սլավոնաֆիլները ոչ պակաս համակրանքով են վերաբերվում, քան արևմտականները։ Չերնիշևսկին առաջինը ցույց տվեց արևմտականների և սլավոնաֆիլների մերձեցման պրոցեսը, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ լիբերալ ճակատի համախմբման պատմական երևույթի դրսևորում։ Սակայն Չերնիշևսկին խստագույնս քննադատում էր սլավոնաֆիլների պատմական հայացքների ռոմանտիզմն ու իդեալիզմը, պատմական անցյալի իդեալականացումը և ինքնատիպ ուղիների ապարդյուն որոնումները[6]։

Այստեղ տեղին է հիշել Ռուսաստանի զարգացման ինքնատիպության առթիվ նարոդնիկական մոլորության լենինյան քննադատությունը։ Նման հայացքը որակելով ռեակցիոն, Վ. Ի. Լենինը ծանոթագրության մեջ նշում է, որ «Այս տերմինը գործ է ածվում պատմա-փիլիսոփայական իմաստով, բնորոշելով միայն այն տեսաբանների սխալը, որոնք անցած կարգերից են վերցնում իրենց կառուցումների նմուշները», փոխանակ նկատի առնելու «տրվյալ տնտեսակարգն ընդհանրապես, նրա տեղն ու նշանակությունը ամբողջ մարդկության զարգացման մեջ, իրենց մտահորիզոնը չսահմանափակելով մեկ երկրով, որի համար իբր կարելի է հատուկ տեսություն հորինել»[7]։

Ռուսաստանի պատմական զարգացման ինքնատիպության առաջին ջատագովները սլավոնաֆիլներն էին։ Նրանց գաղափարախոսության այս ռեակցիոն կողմը նույնպես արդյունք էր ազգային սահմանափակության, հայրենի երկրի պատմական ճակատագիրը մարդկության ընդհանուր զարգացմանը համադրելու անընդունակության։ Սակայն ինքնատիպություն որոնողներին վաղ թե ուշ կյանքը կանգնեցնում է իրենք իրենց հերքելու և կապիտալիզմի իրավունքները ճանաչելու իրողության առջև։ Այդպես պատահեց և՛ սլավոնաֆիլների, և՛ նարոդնիկների հետ։

---

6 Տե՛ս Е. А. Дудзинская, նշվ. աշխ., էջ 44, 150—167։

7 Վ. Ի. Լենին, նշվ. աշխ., հ. 2, էջ 262—263։

Արծրունին անվերապահ էր պահպանողականության, այդ թվում նաև սլավոնաֆիլության գնահատության հարցում։ Եթե «բնազդային» մատերիալիզմը և իրատեսությունը օգնում էին նրան տեսնելու հասարակական այդ հոսանքի ռոմանտիզմը, որոշ դրույթների ժամանակավրեպությունը, ապա չէին ազատագրում թյուրատեսությունից այն դրական բովանդակության նկատմամբ, որը կազմում էր սլավոնաֆիլության պատմական ծառայությունը։

Արծրունին սխալվում էր, նույնացնելով Դոստոևսկու և սլավոնաֆիլների հայացքները, թեև նրանց միջև որոշ մտերմությունը անժխտելի է։ Անջրպետվելով գաղափարախոսների երկու բանակից՝ արևմտականներից ու սլավոնաֆիլներից և նրանց համարելով կյանքից կտրված «տեսաբաններ», որոնք ի վիճակի չեն առաջնորդելու ժողովրդին, Դոստոևսկին զարգացնում է իր այսպես կոչված «հողային» (почвенический) հայացքները, դրանց մեջ հաղթահարված տեսնելով և՛ մեկի, և՛ մյուսի միակողմանիությունը։ Դառնալով արևմտականներին հարցում է, թե արդյո՞ք Արևմուտքի մշակած հասարակական իդեալը այնքան կատարյալ է, որ ամեն մի այլ ժողովուրդ պետք է հրաժարվի նրա մշակմանը իր մասնակցությունը բերելուց։ «Ոչ, միայն այն ժամանակ մարդկությունը կապրի լիարժեք կյանքով, երբ ամեն մի ժողովուրդ կզարգանա իր սկիզբների վրա և կյանքի ընդհանուր գանձարանը կբերի իր առանձնապես զարգացած ինչ-որ կողմը»[8],— պնդում է Դոստոևսկին։

Դոստոևսկու մեջ խոսում էր իսկական հայրենասերի ազգային հպարտությունը, որն ուզում էր տեսնել իր ժողովրդին ոչ կրավորական, այլ եվրոպական ազգերի հետ հավասար վիճակում։ Նա ոչ թե մերժում է եվրոպական իդեալը, այլ ցանկանում այն հարստացած տեսնել նաև ռուսական համակրելի գծերով։ Դոստոևսկին մերժում է նաև սլավոնաֆիլների նեղահայացությունն ու ֆանատիզմը, ազգային նախապաշարվածությունը։ «Խոսելով, ի դեպ, ազգության մասին,— գրում է նա,— մենք դրա տակ նկատի չունենք ազգային այն բացառիկությունը, որը շատ հաճախ հակասում է ողջ մարդկության շահերին։ Ոչ, մենք այստեղ նկատի ունենք ճշմարիտ ազգայինը, որը միշտ գործում է ի նպաստ բոլոր ժողովուրդների շահերի»[9]։

Նույնական չեն Դոստոևսկու և սլավոնաֆիլների նաև պատմական հայացքները։ Դոստոևսկու հասարակական-քաղաքական հայացքներին խորթ է պատմական անցյալի իդեալականացումը։ Մինչպետրոսյան Ռուսիան խաղաղության թագավորություն դիտելու սլավոնաֆիլների միամիտ հայացքի առթիվ նա սրամիտ նկատում է, թե ամեն փայլուն բան չէ, որ ոսկի է, որ այն այդպես է երևում արհեստական լուսավորության տակ։ Դոստոևսկին չի բաժանում նաև Պետրոս Մեծի ռեֆորմներին սլավոնաֆիլների տված անվերապահ բացասական գնահատականը, գտնելով որ Պետրոս Մեծի նման պատմական երևույթը ռուսական հողի վրա հրաշքով չի բուսել, այլ ժամանակի հրամանով է ծնվել. «Ռուսական հողում արդեն զգացվում էին ռեֆորմացիոն փոթորկի սաղմերը, և Պետրոսի մեջ միայն կենտրոնացավ այդ ընդհանուր այրող ցանկությունը՝ նոր ուղղություն տալ մեր պատմական կյանքին»[10]։

Դոստոևսկին դատապարտում է սակայն Պետրոսի գործելակերպը, դրա մեջ դավաճանություն տեսնելով ռուսական ազգային ոգուն, որին խորթ է բռնատիրությունը։ «Նա (ռուս ժողովուրդը— Լ. Գ.) չափից ավելի խաղաղասեր է և սիրում է իր նպատակներին հասնել խաղաղ ճանապարհով, աստիճանաբար»[11],— ասում է Դոստոևսկին։ Այստեղ արդեն նա ջուր էր լցնում սլավոնաֆիլների ջրաղացին, ռուս ժողովրդի ազգային բնավորության նրանց պատկերացումներին։ Պետրոսյան ռեֆորմներից հետո, նրա կարծիքով, խորացավ ռուս հասարակության պառակտումը, բյուրոկրատիան ուռճացավ, մտավորականությունը կտրվեց ժողովրդից։

8 Տե՛ս Ф. М. Достоевский, ПСС, т. 20, М., 1980, с. 6—7.

9 Նույն տեղում, էջ 19։

10 Նույն տեղում, էջ 14։

11 Նույն տեղում, էջ 15։

Դոստոևսկին խորին հավատով է նայում ռուս ժողովրդի ապագային, և նրա այդ հավատը հենվում է ռուս ժողովրդի բացառիկ գծերից մեկին. «Մեր ժողովուրդը անողոք ուժով ի ցույց է հանում իր թերությունները և պատրաստ է ամբողջ աշխարհի առջև խոսելու իր վերքերի մասին, անխնա ձաղկելու ինքն իրեն. երբեմն նույնիսկ անարդարացի է ինքն իր նկատմամբ, հանուն իր մոլեռանդ սիրո հանդեպ ճշմարտությունը, արդարությունը։ ...Եվ մի՞թե մարդու կողմից հիվանդության այդ գիտակցումն արդեն գրավական չէ առողջանալու, հիվանդությունից ապաքինվելու նրա ունակության...»[12]։

Դոստոևսկին իր տարերային դեմոկրատիզմով բարձրանում է սլավոնաֆիլ հրապարակախոսներից, որոնց գաղափարախոսության հետ հաճախ հանիրավի նույնացրել են մեծ գրողի հայացքները։ Այդ սխալը թույլ է տալիս նաև Արծրունին, բնավ իրավունք չունենալով, ինչպես տեսանք, նրան մեղադրելու եվրոպական քաղաքականության նշանակությունը նսեմացնելու, Պետրոս Մեծի դերը չհասկանալու, ժողովրդի տգիտությունն ու նախապաշարմունքները պաշտպանելու մեջ։ Կարծում ենք, Արծրունին հաճույքով կստորագրեր Դոստոևսկու գրած բազմաթիվ տողերի տակ, որովհետև հենց ինքը «Մշակի» էջերում քիչ չէր հուզել մեծ ու փոքր ազգերի համատեղ ջանքերով համաշխարհային քաղաքակրթությունը զարգացնելու, թերություններն ու ախտերը անխնա մտրակելու միջոցով ազգի հասարակական օրգանիզմը բուժելու և նրան առողջ գոյության մղելու խնդիրները։

Թերթի «Գյուղական կալվածներ» առաջնորդող հոդվածում (1881, № 101) Արծրունին քննության է առնում սլավոնաֆիլների տնտեսագիտական հայացքները, ցույց տալով համայնքի միջոցով Ռուսաստանի զարգացման համար ինքնատիպ ուղի որոնելու նրանց ապարդյուն ջանքերը. «Ռուս սլավոնաֆիլները անդադար կրկնելով, թե Արևմուտքը փտած է, թե Ռուսաստանը իր տնտեսական և բարոյական նոր ձևերով պետք է վերանորոգի ամբողջ Եվրոպան, գլխավորապես հենվում են իրենց համոզմունքի մեջ գյուղական համայնքի հողատիրության ձևի վրա, որ չկա Եվրոպայում, բայց որ իբր թե հատուկ է միայն սլավյան ցեղին»։ Նախ պնդելով, որ համայնքները մի ժամանակ հատուկ են եղել Եվրոպային, մանավանդ հասարակական զարգացման ցածր աստիճանների վրա կանգնած ժողովուրդներին, տնտեսագետ Արծրունին համայնական հողատիրությունը պատմության կողմից արդեն դատապարտված է տեսնում անհետացման, որի տեղը բռնելու է մասնավոր հողատիրության ձևը։ Համայնքը, Արծրունու կարծիքով, ունի իր լավ և վատ կողմերը։ Եթե մի կողմից նա արգելակում է գյուղական պրոլետարիատի առաջացումը, ապա մյուս կողմից խոչընդոտում է գյուղատնտեսության ինտենսիվության զարգացմանը, որովհետև հողը ժամանակավոր օգտագործման տրվելով գյուղացուն, նրան չի շահագրգռում կատարելագործելու դրա մշակությունը։

Արծրունին մատնացույց է անում կապիտալիզմի զարգացման հետևանքով գյուղական համայնքի քայքայման անխուսափելի պրոցեսը, երբ արտադրամիջոցներից զուրկ գյուղացիների հողերը անցնում են փողատեր վաշխառուների, վաճառականների՝ գյուղացուն հարստահարողների ձեռքը. «Այդպիսով, հետզհետե հողի սեփականատերը դառնում են ոչ հին կալվածատերը, ոչ էլ գյուղացիները, այլ մի երրորդ դասակարգին պատկանողներ», այսինքն ծնվում է կուլակային վերնախավը։

Հարցի ի՞նչ լուծում է տեսնում Արծրունին։ Նա հայացքը դարձնում է լուսավոր Եվրոպային և մատնացույց անում Ֆրանսիայում և Շվեյցարիայում, Ավստրիայում և Գերմանիայում տիրող հողօգտագործման սիստեմը, որտեղ հողատիրության երկու ձևերը՝ մասնավոր և համայնական, «իրենց փոխադարձ պակասություններով և արժանավորությամբ միմյանց հավասարակշռում են»։ Թե այս «հավասարակշռությունը» ինչպես պիտի արգելակեր գյու-

12 Նույն տեղում, էջ 21։

զական պրոլետարիատի առաջացումը՝ կապիտալիզմի անխուսափելի արգասիքը, Արծրունին չի պարզաբանում, սակայն սլավոնաֆիլների ուտոպիական հայացքների նրա քննադատության մեջ հայտնի չափով ճշմարտություն կա։

«Մշակի» 1881 թ. № 110-ի առաջնորդողը ուղղակի վերնագրված է՝ «Ռուս սլավյանոֆիլներ»։ Այսպիսի ուշադրությունը իսկույն հասկանալի է դառնում առաջնորդողի առաջին տողերից. «Վերջին ժամանակները ռուսաց ազատամիտ մամուլը բանակռիվ ունի ռուս սլավյանոֆիլների հետ, որոնց օրգանն է այժմ Ակսակովի «Русь» լրագիրը»։ Դա, իհարկե, հին վեճ էր, որ արդեն կես դար խմորում էր ռուս հասարակական միտքը։ Արծրունին նկատում է, որ սլավոնաֆիլները որտեղ քննադատում են տիրող կարգերը, համերաշխում են ազատամիտների հետ. «Սլավյանոֆիլներն էլ, ինչպես հասարակության ազատամիտ մասը, կրկնում են՝ մեզ հարկավոր է հոգևոր ազատություն, խոսքի ազատություն, ժողովրդի և իշխանության փոխադարձ կապ, փոխադարձ համերաշխություն, նրանք էլ հայտնում են բյուրոկրատիայի (պաշտոնյաների դասակարգի) դեմ իրենց հակակրությունը...»։ Սակայն, Արծրունու կարծիքով, քննադատելով եղած հասարակական կարգերը, ազատամիտները առաջ են նայում, այսինքն՝ Եվրոպային, իսկ սլավոնաֆիլները՝ դեպի հետ. «Նրանց իդեալն է նահապետական, պատրիարքական պետությունը՝ հիմնված բարոյական վերացական սկզբունքների վրա»։ Անիրականալի էր սլավոնաֆիլների երազանքը՝ ազգը մի ընտանիք է, որտեղ պետք է թագավորի սեր, միություն, բարոյականություն և այլն։ Իդեալիզմը և ուտոպիզմը խոցելի են դարձնում սլավոնաֆիլների հայացքները և՛ սոցիոլոգիայի, և՛ բարոյագիտության բնագավառում, սակայն Արծրունին չի խորանում նրանց հակասական ու բարդ աշխարհայացքի պատմական օբյեկտիվ բովանդակության մեջ։ Իհարկե, շատ ավելի հեշտ էր միստիցիզմով ու խավարամտությամբ բացատրել եվրոպական քաղաքակրթության նկատմամբ նրանց թերահավատությունը, քան փորձել գտնել քաղաքական և բարոյական այն դրդապատճառները, որոնք ստիպում էին սլավոնաֆիլներին երես դարձնել Եվրոպայից և ռուսական հողի վրա փնտրել իրենց իդեալը։ «Ռուս մամուլի բանակռիվը» առաջնորդող հոդվածում (1882, № 62), մանրամասնությունների մեջ չմտնելով, Արծրունին ուղղակի ընթերցողներին է հանձնում իր եզրակացությունը՝ իրեն «ազգային», «ժողովրդական» անվանող մամուլը արժանի է «հետադեմ» անվանվել, քանի որ չի ընդունում եվրոպական քաղաքակիրթ երկրների լուսամտության և առաջադիմության արգասիքը։ Այն ոչ թե ազգային ինքնուրույնության կուսակից է, այլ միմիայն հնության պաշտպան, որի նշանաբանն է՝ հետ դառնալ վաղուց անցած ժամանակներին։ Իսկ սլավոնաֆիլության պատմությունն ուսումնասիրող պատմաբանը հաստատում է, որ պատմական անցյալի մեջ նրանք փնտրում էին Ռուսաստանի զարգացման իրենց կոնցեպցիայի համար հենարան. անցյալի իդեալականացումն իր հիմքում ռեալ հող ուներ։ Հին Ռուսիայի անխռով, առանց հեղափոխական ցնցումների և դասակարգային պայքարի զարգացումը գովաբանելով, նրանք հետապնդում էին ցույց տալ այն հասարակական հարաբերությունները, որոնք կկարողանային սկզբունքորեն օրինակ ծառայել Ռուսաստանի ապագա պետական կառուցվածքի համար։ Իսկ սա բնավ չի նշանակում. թե նրանք ուզում էին Ռուսաստանը հետ դարձնել[13]։

«Խավարասերների խարդախությունը» վերնագրով առաջնորդող հոդվածով (1882, № 193) Արծրունին հասնում է իր փափագելի ընդհանրացմանը. «Ուշադրությամբ հետևեցեք գերմանական խավարասերների բոլոր արածներին գերմանացիների վերաբերությամբ և համեմատեցեք ռուս խավարասերների՝ Կատկովի և Ակսակովի արածների հետ ռուս հասարակության վերաբերությամբ, և կտեսնեք, որ դրանք կատարելապես միանման հասարակական երևույթներ են։ Վերջապես համեմատեցեք նրանց մեր ողորմելի հայ

[13] Е. А. Дудзинская, նշվ. աշխ., էջ 50։

խավարասերների հետ, դուք կհամոզվեք, որ ամբողջ աշխարհի երեսին խավարասերները կարծես մի դպրոցից են դուրս եկել, միմյանց կատարելապես նման են»։ Այսպիսով, անալոգիաներն ավարտվում են կատարյալ նմանության հայտնաբերմամբ։ Արծրունու պատկերացումները հասարակական հոսանքների և կոալիցիաների մասին ձևված են մի տրաֆարետով, որտեղ բոլոր ազդերի լիբերալներն իրար են նման, պահպանողականները՝ իրար։ Նա հաշվի չի նստում ազգերի պատմական ճակատագրերի, ազգային առանձնահատկությունների, ճնշող թե ճնշված ազգ լինելու իրողության հետ։ Պատերազմ հայտարարելով ֆեոդալիզմին, նա պահպանողականությունը ևս դիտում էր ֆեոդալական կատեգորիա, հասու չլինելով այն գիտակցությանը, որ բուրժուական գաղափարախոսությունը ևս կարող էր ունենալ իր պահպանողական այլաձևությունը։ Խոսելով քաղաքական տերմինների հետ անփութորեն վարվող վայ-տեսաբանների մասին, ականավոր մարքսիստ Սուրեն Սպանդարյանը (որի հայրը հայ ազգային-պահպանողական գաղափարախոսներից մեկն էր և «Նոր-դար» թերթի խմբագիրը) խնդիր էր դնում անպայման հաշվի առնել «այն ուրույն հատկությունները, որ այդ՝ ամենուրեք ընդունված քաղաքական տերմիններին հաղորդում է յուրաքանչյուր ազգության պատմական զարգացման ընթացքը... յուրաքանչյուր երկրում և յուրաքանչյուր ժողովրդի մեջ բոլոր այդ տերմինները պետք է կիրառվեն պատշաճ զգուշավորությամբ, ուշադրության առնելով պատմական տեսակետը»[14]։

Հենց այդ պատմական տեսակետն էր պակասում Արծրունուն, որից էլ նրա կատարած զուգահեռներն ու անալոգիաները հայ ժողովրդի և այլ ազգերի հասարակական զարգացման հարցերում օբյեկտիվ հիմք ունենալով հանդերձ, դառնում են միակողմանի։ Նա ֆետիշացնում, բացարձակացնում էր միայն նմանությունները, այն էլ բացասական, անգիտանալով առանձնահատկությունները։

Կապիտալիզմի շրջանը ոտք դնելու փուլում հասարակական մտքի զարգացմանը հատուկ է մի օրինաչափություն. հնից դեպի նորը անցման ամեն մի փուլ աչքի է ընկնում քննադատական մտքի արտասովոր զարգացմամբ, քանի որ նորի ծնունդը նախ պահանջում է հնի մերժում, հնի կործանում։ Իբրև նոր ծնվող կապիտալիստական հասարակարգի գաղափարախոս, Գրիգոր Արծրունին հասարակական զարգացման այդ կողմն էր արտահայտում։ Սակայն այդ միտումն իր մեջ վտանգ ունի՝ կեղտաջրի հետ դեն նետել նաև մանուկին, հնոտիների հետ դեն նետել նաև դրական արժեքները, որոնք սրբագործվելով անցյալի մեջ, անցագիր են ստանում դեպի ապագան։ Ահա սրան ի հակակշիռ, ազգային—պահպանողական հոսանքը գալիս է գիմադրելու, զսպելու քանդողների չափից ավելի ոգևորությունն ու եռանդը։

Հասարակական մտքի զարգացման երկու միտումների հավասարակշռությունն էլ պայմանավորված էր բուրժուական ազգի զարգացմամբ և կազմում վերջինիս գաղափարական կյանքի ներքին բովանդակությունը։ Պատմական այդ օբյեկտիվ բովանդակությունն էր արտահայտում XIX դ. կեսերին արևմտականների ու սլավոնաֆիլների պայքարը Ռուսաստանում և մշակականների ու ազգային-պահպանողականների պայքարը՝ հայ իրականության մեջ։ Նշված երկու ծայրահեղություններից վեր էին կանգնած և վաստակած իրավունքով քննադատում էին և՛ մեկին, և՛ մյուսին հասարակական մտքի առաջատար հոսանքի՝ հեղափոխական-դեմոկրատիայի ներկայացուցիչները։

Սակայն անցյալ դարի 70—80-ական թվականների հայ իրականության մեջ նրա ձայնը թույլ էր հնչում։ Եվ Արծրունին հավակնում էր առաջադիմության միահեծան տերը լինել։ Նա «Մշակը» հայտարարում էր միակ առաջադեմ թերթը, դրական ուղղությամբ օրգանը, իսկ մնացած հայ պարբերականները՝ պահպանողական, բացասական ուղղության ներկայացուցիչներ։

---

14 Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 1, Երևան, 1959, էջ 233, 234։

Սլավոնաֆիլությանը նվիրված Արծրունու ամենուշ շրջանի նշանակալից հոդվածը գրվել է 1882 թ. Ի. Ս. Ակսակովի մահվան առիթով (№ 16)։ Ընդարձակ բանասիրականում կարդում ենք. «Նախ և առաջ Ակսակով այն պատճառով ամենամեծ հարգանքի արժանի է, որ նա որպես ռուս համոզված և անկեղծ ազգասեր էր, իր հայրենիքի շահերի, նրա արտաքին ուժի, մեծության ու փառքի և նրա ներքին բարօրության անկեղծ, անձնվեր, համոզված պաշտպան էր»։ Հարգանքի այս տուրքը թեև այնքան էլ չի ներդաշնակում Ակսակովի մասին Արծրունու մինչ այդ գրածներին, բայց հետաքրքիր է հայ պահպանողականության հետ մի նոր համեմատությամբ. հիշեցնելով ընթերցողներին, որ Ակսակովը պատկանում էր Ռուսաստանում սլավոնաֆիլների երբեմնի զորեղ խմբին, որն իր միակողմանի հայացքով հայրենիքի բարօրությունը փնտրում էր անգործադրելի դարձած հնության մեջ և դրսևորում արհամարհանք դեպի եվրոպական վսեմ գաղափարները, Արծրունին շեշտում է. «Կարելի է շատ բաներում չհամակրել հանգուցյալ ռուս նշանավոր պուբլիցիստի իր բազմամյա հրապարակախոսական գործունեության մեջ հայտնած մտքերին և միակողմանի հայացքներին, բայց անկարելի էր ուրանալ, որ Ակսակով համոզված և անկեղծ մարդ էր, որոշ հաստատ ուղղություն ունեցող, ինքն իրեն երբեք չհակասող, անկեղծ մտածող էր»։ Հատկանշական է, որ մահախոսականը Արծրունին ավարտում է հայ ազգային պահպանողականներին նվիրված «մի քանի խոսքով», որոնց համար նա բացառում է անկեղծ համոզմունքը, հայրենասիրությունը, առաջադիմության ձգտումը։

Կարելի է ափսոսալ, որ օբյեկտիվ լինելու ունակությունը Գր. Արծրունին դրսևորում է միայն ռուս նշանավոր սլավոնաֆիլ գործչին գնահատելիս, այն էլ մահախոսականում։ Երկու տասնամյակ «Մշակի» էջերում վարած բանավիճային պայքարում առաջադիմության դրոշը պարզելու իր եռանդուն ձգտման մեջ նա չկարողացավ հանդուրժել այլախոհ մտածողների, հասկանալ, որ ազգային-պահպանողականությունը հասարակական զարգացման հրամայական պահանջով կյանքի կոչված մի յուրատեսակ հոսանք է, որի գոյությունը նույնքան պայմանավորված էր կապիտալիզմի զարգացմամբ, ինչպես և լիբերալիզմի։ Հայ ազգային-պահպանողականների հետ գաղափարական պայքարում կանգնած լինելով ավելի առաջադիմական դիրքերում, նա չկարողացավ ազատագրվել կրքի և սուբյեկտիվիզմի ազդեցությունից և ձգտելով առաջադիմության մենաշնորհի, հանիրավի սևացրեց. հասարակական մտքի մի ամբողջ բանակի գործիչների, որոնց բերած նպաստը հայ առաջադիմությանը այսօր նույնպես անտարակուսելի է։ Պատմագիտության խնդիրն է պատմական արժեքները վերագնահատելու միջոցով մշտապես հասու լինել ճշմարտության վերականգնմանը։

ГРИГОР АРЦРУНИ КАК КРИТИК СЛАВЯНОФИЛЬСТВА

Л. М. ГЕВОРКЯН

Резюме

Выдающийся армянский публицист Гр. Арцруни на страницах своей газеты «Мшак» уделял особое внимание не только пропаганде русской литературы и публицистики, но и выступал как критик славянофильства. В борьбе со своими идейными противниками Гр. Арцруни, обращаясь к историческому опыту и авторитету русской общественной мысли, прибегал к сравнению взглядов славянофилов и армянских консерваторов. Эта аналогия понадобилась ему для того, чтобы нагляднее показать регрессивность позиции своих идейных противников. Однако критика славянофильства со стороны Гр. Арцруни носит односторонний характер и методологически уязвима.